334.5(47.925)
Հ-24

26137

Հ. Ս. Խ. Հ.

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

## 1928-29 ՏՆՏ. ՏԱՐՈՒՄ

(Նյութեր յեվ թվական տվյալներ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊԻ»
ՅԵՐԵՎԱՆ—1929

05.06.2013

334.5(47.925)
Հ-24
145 05 JAN 2010
ար

Հ. Ս. Խ. Հ.

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ

## 1928-29 ՏՆՏ. ՏԱՐՈՒՄ

(Նյութեր յեվ թվական տվյալներ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԿՈՈՊԻ»
ՅԵՐԵՎԱՆ——1929

15029-57

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 1788բ.
ՏԻՐԱԺ 1000

26/37

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հայկոոպի վարչության 26 փետրվարի № 69 շրջաբերականը։
II. Հրահանգ հաշվետու-վերընտրական կամպանիայի մասին։
III. Կուլտ-յինթաբաժնի ձեռնարկումները կամպանիայի ընթացքում։
IV. Դիֆերենցիալ փայավճարներին անցնելու մասին (թեզիսներ)։
V. Ոգուտների բաշխման նախագիծ։
VI. Թվական տվյալներ զեկուցողների համար։
ա) սպառկոոպերացիայի գործունեության ընդհանուր պայմանները,
բ) սպառողական կոոպերացիան ԽՍՀՄ-ում,
գ) սպառողական կոոպերացիան ՀՍԽՀ-ում,
դ) սպառկոոպի հաշվետու զեկուցման թվական տվյալները։
VII. Ինչպես կազմել հաշվետու զեկուցում։

Հ. Ս. Խ. Հ.
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
"ՀԱՅԿՈՈՊ"

26 փետրվարի 1926 թ.

№ 69.

Շրջաբերական

# ԲՈԼՈՐ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

## Հայկոոպի բոլոր ճրաճանգիչներին

## *ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ*

*Հարգելի ընկերնե՛ր,*

*1928—29 հաշվետու վերընտրական կամպանիան պետք է այս տարի հատուկ ուշադրության արժանանա թե՛ կոոպերացիայի ղեկավար մարմինների և թե՛ կոոպերացված լայն մասսաների կողմից։*

*Անցյալ հաշվական տարին սպառողական կոոպերացիան թե՛ ԽՍՀՄ-ում և թե ՀՍԽՀ ում ունեցել է մի շարք անվիճելի նվաճումներ։ Այդ նվաճումների շարքին են պատկանում բանվորագյուղացիական մասսաների կոոպերացման թափը, տնտեսությունների թվի 60,3 տոկոսի կոոպերացումը, սպառողական կոոպերացիայի շրջանառությունների աճումը (1926—27-ի համեմատությամբ 1927—28-ին մոտ 42 °/₀-ով), կուլտ-կրթական ու կուլտ-հասարակական աշխատանքներին կոոպերատիվ ակտիվի անցյալի համեմատությամբ լայն մասնակցությունը, ծրագրային*

ու նախահաշվային աշխատանքների անցնելու մեջ կատարված համեմատական հառաջադիմությունը և այլն։

Միաժամանակ սպառողական կոոպերացիայի վերջին տարվա աշխատանքներն ընթացել են միշարք դժվարությունների պայմաններում՝ առաջին հերթին վորոշ ապրանքների դեֆիցիտի, գյուղի և քաղաքի թշնամի տարրերի (կուլակներ-նեպմաններ) համեմատական աշխուժացման, վարկային ու վճարումային պայմանների վատթարացման և այլ բնագավառներում։

Հաշվետու վերընտրական ժողովների հաջող արդյունքներն ապահովելու համար դուք հատուկ ուշադրություն եք դարձնելու նախապատրաստական աշխատանքներին՝ այս մասին առաջնորդվելով մեր ընտրական հրահանգով, վորը կցված է սույն շրջաբերականին։

Առաջիկա հաշվետու-վերընտրական կամպանիայի հիմնական խնդիրներն ու լոզունգները բնորոշվում են հետևյալ գլխավոր մոմենտներով։

1. Կոոպերատիվ հասարակայնության աշխուժացման անհրաժեշտությունը բղխում է գյուղի դասակարգային շերտավորման փաստից։ Անհրաժեշտ է սպառկոոպերացիայի շուրջը համախմբել բատրակ ու չքավոր մասսաներին և միացած գյուղի միջակ շերտի հետ վճռականորեն չեզոքացնել գյուղի կուլակին։ Հիմնական լոզունգը՝ «Ոչ մի կուլակ տեղ չպիտի ունենա սպառողական կոոպերացիայի ընտրովի մարմինների մեջ»։



2. Սակայն չքավորների լայն մասնակցությունն ու առաջ քաշումը կոոպերացիայի մեջ, նրանց հասարակայնության լրիվ ապահովումը, պետք է իրականացվի վոչ միայն հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում, այլ և կոոպերատիվի հետագա գործունեյության մեջ։ Այդ նպատակով նոր ընտրվելիք լիազորների, խանութային հանձնաժողովների, վարչությունների ու վերստուգիչ հանձնաժողովների կազմերի մեջ անպայման չքավորներին պետք է ապահովել ավելի մեծ քանակությամբ թեկնածուներ, քան մինչև այժմ (վոչ մի դեպքում չանտեսելով միջակներին), վորպեսզի հետագայում մեր կողմից ընտրվելիք հատուկ ցուցումներով կազմակերպվի կոոպերատիվի չքավոր անդամների հասարակայնությունն ու ղեկավարությունը կոոպ. աշխատանքներում։

3. Կոոպերացիայի հասարակայնության զարգացման հիմնական խթանը գյուղում թե քաղաքում պետք է հանդիսանան կուլտ կրթական ու կուլտ-կենցաղային աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարությունը։ Անհրաժեշտ է հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում մասսաների ուշադրությունը հատկապես կենտրոնացնել այս խնդիրների վրա, հաշվետու զեկուցումների մեջ անպայման թվել այդ բնագավառում տարած աշխատանքների նվաճումներն ու բացերը, ներկայացնել ապագայի ծրագիրը։ Սպառկոոպերացիան պետք է դարձյալ վերհիշի Վ. Ի. Լենինի «կուլտուրական կոոպերատորների հասարակակարգը-սոցիալիստական հասարակակարգն է» լոզունգը և հատուկ ուժ տա կուլտ կենցաղային ու կուլտ-լուսավորական աշխատանքներին։

ու նախահաշվային աշխատանքների անցնելու մեջ կատարված համեմատական հառաջադիմությունը և այլն։

Միաժամանակ սպառողական կոոպերացիայի վերջին տարվա աշխատանքներն ընթացել են մի շարք դժվարությունների պայմաններում՝ առաջին հերթին որոշ ապրանքների դեֆիցիտի, գյուղի և քաղաքի թշնամի տարրերի (կուլակներ-նեպմաններ) համեմատական աշխուժացման, վարկային ու վճարումային պայմանների վատթարացման և այլ բնագավառներում։

Հաշվետու վերընտրական ժողովների հաջող արդյունքներն ապահովելու համար դուք հատուկ ուշադրություն եք դարձնելու նախապատրաստական աշխատանքներին՝ այս մասին առաջնորդվելով մեր ընտրական հրահանգով, որը կցված է սույն շրջաբերականին։

Առաջիկա հաշվետու-վերընտրական կամպանիայի հիմնական խնդիրներն ու լոզունգները բնորոշվում են հետևյալ գլխավոր մոմենտներով։

1. Կոոպերատիվ հասարակայնության աշխուժացման անհրաժեշտությունը բղխում է գյուղի դասակարգային շերտավորման փաստից։ Անհրաժեշտ է սպառկոոպերացիայի շուրջը համախմբել բատրակ ու չքավոր մասսաներին և միացած գյուղի միջակ շերտի հետ վճռականորեն չեզոքացնել գյուղի կուլակին։ Հիմնական լոզունգը՝ «Ոչ մի կուլակ տեղ չպիտի ունենա սպառողական կոոպերացիայի ընտրովի մարմինների մեջ»։



2. Սակայն չքավորների լայն մասնակցությունն ու առաջ քաշումը կոոպերացիայի մեջ, նրանց հասարակայնության լրիվ ապահովումը, պետք է իրականացվի ոչ միայն հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում, այլ և կոոպերատիվի հետագա գործունեության մեջ։ Այդ նպատակով նոր ընտրվելիք լիազորների, խանութային հանձնաժողովների, վարչությունների ու վերստուգիչ հանձնաժողովների կազմերի մեջ անպայման չքավորներին պետք է ապահովել ավելի մեծ քանակությամբ թեկնածուներ, քան մինչև այժմ (ոչ մի դեպքում չանտեսելով միջակներին), որպեսզի հետագայում մեր կողմից տրվելիք հատուկ ցուցումներով կազմակերպվի կոոպերատիվի չքավոր անդամների հասարակայնությունն ու ղեկավարությունը կոոպ. աշխատանքներում։

3. Կոոպերացիայի հասարակայնության զարգացման հիմնական խթանը գյուղում թե քաղաքում պետք է հանդիսանան կուլտ կրթական ու կուլտ-կենցաղային աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարությունը։ Անհրաժեշտ է հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում մասսաների ուշադրությունը հատկապես կենտրոնացնել այս խնդիրների վրա, հաշվետու զեկուցումների մեջ անպայման թվել այդ բնագավառում տարած աշխատանքների նվաճումներն ու բացերը, ներկայացնել ապագայի ծրագիրը։ Սպառկոոպերացիան պետք է դարձյալ վերհիշի Վ. Ի. Լենինի «կուլտուրական կոոպերատորների հասարակակարգը-սոցիալիստական հասարակակարգն է» լոզունգը և հատուկ ուժ տա կուլտ կենցաղային ու կուլտ-լուսավորական աշխատանքներին։

4. Անպայման գյուղի դասակարգային սրման պայմաններում (վորն ակնհայտնի կերպով դրսևորվեց խորհուրդների հաշվետու շրջանում) չքավորների կոոպերացման խնդիրը դառնում է ծայրահեղ կարևորություն ունեցող խնդիր։ Գյուղի բատրակ-չքավորական շերտը պետք է դառնա սպառողական կոոպերացիայի հենարանը գյուղում և չքավորների կոոպերացման խնդիրը՝ մեր կազմակերպչական աշխատանքների ամենապատասխանատու մասը։ Հենց այդ պատճառով հաշվետու շրջանում՝ ա) պետք է օգտագործված լինի ձեր չքավորական ամբողջ ֆոնդը, բ) պետք է կազմված լինի այս մասին մանրամասն հաշվետվություն, գ) պետք է մասսաներին տեղյակ դարձնել տարած աշխատանքների արդյունքների մասին և դ) հատուկ ծրագրով պետք է աշխատանք տանել չքավորների կազմակերպված մասնակցությունը կոոպերացիայի ընտրությունների ժամանակ ապահովելու համար։

«Դասակարգայնորեն կազմակերպված չքավորը ձեռք-ձեռքի տված գյուղի միջակի հետ—դեպի ընտրությունները»—ահա այն լոզունգը, վոր պետք է ձեր աշխատանքի ընթացքում կիրառեք։

5 Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում չքավորության կազմակերպման ու ակտիվացման հետ զուգահեռ կերպով հարց պիտի ծագի սպառկոոպերացիայի կողմից կոլեկտիվ տնտեսությունների սպասարկման կանոնավորման խնդիրների շուրջը։ Անհրաժեշտ է՝ ա) հաշվետու վերընտրական



կամպանիայում սպառկոոպերացիայի մասսայական ժողովներում ինֆորմացիա տալ կոլեկտիվ տնտեսությունների ու սպառկոոպների փոխհարաբերությունների վերաբերմամբ, բ) կոլտնտեսություններին տալ այն բոլոր արտոնությունները, վորոնք տրվում են չքավորներին, գ) ընդհանուր առմամբ հաշվետու ժողովներին հրավիրել կոլեկտիվ տնտեսություններին կազմակերպված մասնակցելու, իսկ մեծ կոլտնտեսություններում դնել հատուկ հաշվետու ժողովներ։

Սպառկոոպերացիան պետք է մասսայական աշխատանքների մեջ կոլտնտեսությունների կուլտ-կրթական, կենցաղային և սպառողական կարիքների բավարարման առաջնահերթ նշանակություն տա։

6. Սպառկոոպերացիայի աշխատանքների ընդհանուր վերելքին չի համապատասխանում կոոպերացիայի սեփական միջոցները, այլև նրա վարկերը։ Ցեթե կոոպերացիայի սեփական միջոցներն այս տարում զգալի (բայց վոչ բավարար) աճում են ցույց տալիս, ընդհակառակը, վարկային լիմիտները և վճարումների ժամկետները վատթարացել են։ Մեր յերկրի ինդուստրալացման պայմաններում սպառկոոպերացիան աստիճանաբար պետք է ազատվի պետական վարկերից օգտվելու անհրաժեշտությունից և անցնի սեփական ու տեղական միջոցներով աշխատելու սկզբունքին։ Այս մտքով մեր սիստեման հաշվետու-

վերընտրական կամպանիայի ընթացքում ձեռք է առնելու հետևյալ կազմակերպչական միջոցները՝ ա) ի փոփոխումն կանոնադրության մեջ նշանակված փայավճարի չափին ընդունելու յե դիֆերենցիալ փային անցնելու վորոշում, համաձայն սույն շրջաբերականին կցված հատուկ թեզիսների և արձանագրության մեջ են մտցնելու հաշվետու ժողովի հաստատումից հետո, բ) լայն ագիտացիա յեն մղելու ավանդների ու ավանսների գործի շուրջը՝ կոոպերատիվի շրջանառության մեջ առնելով սպառկոոպի անդամների խնայողությունները. Հաշվետու-վերընտրական կամպանիայից հետո մեր ամբողջ ցանցը պետք է անմիջապես անցնի դիֆերենցիալ փայավճարի սիստեմին։

(Այս մասին կտրվի լրացուցիչ հրահանգ կամպանիայից հետո)։

7. Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում գյուղի կուլակային տարրերը, ոգտվելով սպառկոոպերացիայի դժվարություններից ու ապարատային բացերից (ապրանքների պակաս, բաշխման թերություններ, խնամիություններ և այլն) կազմակերպված գրոհ են տալու կոոպերացիայի վրա—հաշվետու-վերընտրական ժողովներում, և փորձեր են կատարելու վարչական ու ստուգողական մարմինների մեջ անցկացնել իրենց ներկայացուցիչներին՝ խոստանալով, վոր վերջիններս «փորձված» ու «հաջող» աշխատանքի ավելի յեն ընդունակ։ Անհրաժեշտ է թե հաշվետու և թե վերընտրական ժողովներում տալ մանրամասն բացատրական դեկուցում-



ներ առևտրական շուկայի ներկա դրության (ապրանքների պակասը) և հեռանկարների մասին։ Բացի այդ՝ անհրաժեշտ է ամեն տեղ ընդգծել մեր դասակարգային գիծը թե ապրանքների բաշխման, թե վարչական ու ստուգողական մարմինների ընտրության գործում, բոլոր միջոցներով կազմակերպված հարված տալով կուլակային տարրերի ու նրանց կողմնակիցների յելույթներին ու փորձերին։

8. Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում հայտնաբերվելու և ժողովների քննության նյութ են դառնալու սպառողական կոոպերացիայում տեղի ունեցած զեղծումների, չարաշահությունների ու յուրացումների բազմաթիվ դեպքերը։ Անհրաժեշտ է լայն կոոպերացված մասսաներից չծածկել մեր կոոպերացիայի արմատները կրծող այդ յերևույթները և միաժամանակ նրանց վերացման համար կոնկրետ միջոցներ ձեռնարկել։ Հաշվետու-վերընտրական կամպանիան լավագույն առիթ է, վոր սպառողական կոոպերացիան իր 120 հազարի հասնող մասսայի առաջ ծավալի ամենալայն չափերով ինքնաքննադատության լոզունգը՝ դրանից հանելով գործնական յեզրակացություններ և առաջադրություններ։ Կոոպերատիվ կադրերի խնդիրը հիմնականն է, վոր այս դեպքում մասսաների լայն քննության պիտի դրվի։ Աշխատանքային դիսցիպլինայի ու պատասխանատվության զգացմունքի բարձրացումն ու կիրառումը, և, վերջապես, կոոպերատիվ ընտրովի ու տեխնիքական

ապարատների վերջնական զտումն անհարազատ տարրերից—խնդիրներ են, որոնք հնարավորություն կտան մեր ապարատային հիվանդությունների վերջնական վերացմանը։ «Կոոպերացիայում տեղ չպիտի գտնեն զեղծարարներն ու զեղծարարությունները, չարաշահներն ու չարաշահությունները։

9. Վերջապես, անհրաժեշտ պետք է համարել հաշվետու վերընտրական կամպանիայի ամբողջ ընթացքի մասին կանոնավոր ինֆորմացիայի կազմակերպումը։ Այդ նպատակով պետք է՝ ա) առաջնորդվելով սույն շրջաբերականին կցված հրահանգով Հայկոոպի կազմ-բաժնին ներկայացնել տեղեկություններ կամպանիայի նախապատրաստական ժողովների մասին, վերընտրությունների արդյունքների մասին, հաշվետու-ժողովի, ոգուտների բաշխման և չքավորների կոոպերացման հետևանքների մասին։

Հայկոոպի վարչությունը համոզված է, որ սպառողական կոոպերացիայի աշխատողները լիակատար պատասխանատվությամբ և մեր սիստեմային հատուկ կարգապահական հիմունքներով ձեռք կզարկեն հաշվետու վերընտրական կամպանիային՝ տանելով ծրագրված աշխատանք, համապատասխան գործելակերպ ու օրացույցային պլան մշակելով և հոգ տանելով կանոնավոր ինֆորմացիա տալ թե մամուլին, թե Հայկոոպին կամպանիայի ընթացքի, հետևանքների ու արդյունքների մասին։

Կոոպ. բարևներով՝

Հայկոոպի վարչության նախագահ՝ Ս. ՈՏՅԱՆ

Վարչ-անդամ՝ Պ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

Կոնսուլտանտ՝ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ



# ՀՐԱՀԱՆԳ

## ՀՍԽՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ 1928—29 ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

### 1. Ընդհանուր մաս

1. Հաշվետու վերընտրական կամպանիան սկըսվում է մարտի 10-ին և վերջանում է մայիսի 5-ին։

2. Նախքան կամպանիան սկսվելը Հայկոոպի կազմ-բաժնի նախաձեռնությամբ և գավառական շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ տեղի յեն ունենում գավառական կոոպերատիվ խորհրդակցություններ։

3. Գավառական կոոպերատիվ խորհրդակցությունների որակարգում դրվում են հետևյալ հարցերը.

ա) 1928—29 տ. հաշվետու վերընտրական կամպանիայի հիմնական խնդիրները,

բ) գավառի հաշվետու-վերընտրական կամպանիայի որացույցային պլանի մշակումը,

գ) ցանցի վերակազմության և նորմալացման խնդիրները,

դ) ընթացիկ հարցեր։

ԾԱՆՈԹ.—Այս որակարգը կարող է լրացման յենթարկվել խորհրդակցության կողմից։

4. Գավառական ընտրական հանձնաժողովները կապ են պահպանում Հայկոոպի կազմ-բաժնի հետ, վերջինից ստանալով համապատասխան նյութեր և ղեկավարություն։

5. Հաշվետու վերընտրական կամպանիայի ղեկավարման և պլանաչափ կիրառման նպատակով բոլոր կոոպերատիվներին կից կազմակերպվում են ընտրական հանձնաժողովներ, վարչության, վերստուգիչ հանձնաժողովի, խանութային հանձնաժողովի, կոմ. և կոմյերիտ բջիջների, գյուղխորհուրդների, ՓՈԿ-ի, կուլտ-հանձնաժողովների, կոոպերատիվ ակտիվի, չքավորների, կանանց և յերիտասարդության մասնակցությամբ։ Ընտրական հանձնաժողովի նախագահը նշանակվում ե գավ. հանձնաժողովի կողմից։

6. Գավառական խորհրդակցությունից անմիջապես հետո յերեք որվա ընթացքում սպառողական բոլոր կոոպերատիվների վարչությունները կատարում են հետևյալ աշխատանքները.

ա) նշանակում և հաստատում են վերընտրական հանձնաժողովներ իրենց վարչության կից (տես 5-րդ կետ),

բ) քննում և հաստատում են կամպանիայի օրացուցային պլանը և այն տեխնիքական խնդիրները, վորոնք կապված են կամպանիայի հետ.

գ) հրավիրում են կոոպ-ակտիվի խորհրդակցություն վերընտրական կամպանիայի խնդիրների վերաբերյալ։

7. Թե բազմախանութ և թե միախանութ կոոպերատիվներում մշակվում ե կամպանիայի մանրամասն



պլանը, վորի մեջ նախատեսնված պետք ե լինեն հետևյալ աշխատանքները.

ա) կամպանիայի նախապատրաստության մասը և բ) հաշվետու-վերընտրական մասը.

## 2. Կամպանիայի նախապատրաստումը

8. Կամպանիայի նախապատրաստումը սկսվում ե չքավորների, կանանց, կոմյերիտմիության և գյուղխորհրդի առանձին ժողովներով, վորոնց մասին պետք ե ամենալայն հայտարարություն անել։

9. Այդ նախապատրաստական ժողովների նպատակն ե պատրաստել սպառկոոպի բատրակ, չքավոր և միջակ անդամների մասը ընտրական ժողովներում հակահարված տալու կուլակներին ու նրանց ազդեցության տակ գտնվողներին՝ կոոպերատիվի ընտրական մարմիններում դիրքեր գրավելու համար։

10. Չքավորների, կանանց և կոմյերիտմիության ժողովներում միաժամանակ պետք ե նպատակ դրվի չկոոպերացված մասսաներին կոոպերացիայի շարքերը գրավելու։

11. Չքավորների, կանանց և կոմյերիտմիության ժողովներ պետք ե անցկացնել այն բոլոր գյուղերում, վորտեղ կոոպերատիվի բաժանմունք կա, կամ վորտեղ կան անդամների կոմպակտ մասսաներ (15—20 հոգի)։

12. Այդ ժողովներում առաջարկվում ե հետևյալ որակարգը.

ա) Չքավորների խորհրդակցություն.

1. վերընտրական կամպանիան և չքավորների անելիքները,

2. դիֆերենցիալ փայի մասին.

3. վարչության, վերստուգիչ և խանութային հանձնաժողովների կամ լիազորների և խանութային հանձնաժողովների թեկնածությունների քննությունը. (զեկուցողը նշանակվում ե շրջանային կուսկոմիտեյի կողմից)։

բ) Կոմյերիտմիության ժողովներում (անց ե կացնում կոմսոմոլի շրջկոմը).

1. վերընտրական կամպանիան և յերիտմիության անելիքների մասին.

2. դիֆերենցիալ փայի մասին (այս խնդիրը դրվում ե յերիտմիության շրջանային ժողովներում)։

գ) Կանանց պատգամավորական ժողովներում.

1. զեկուցում սպառողական վերընտրական կամպանիայի մասին և պատգամավորական ժողովների անելիքները, (զեկ. կին-հրահանգչուհիները)։

դ) Գյուղխորհուրդների դռնբաց նիստեր.

1. կոոպերացիայի ընդհանուր խնդիրների մասին և վերընտրական կամպանիան (զեկուցողը նշանակվում ե կուսշրջկոմի կողմից),

2. դիֆերենցիալ փայի մասին։

## 3. Հաշվետու ժողովներ

13. Հաշվետու ժողովներ հրավիրվում են բազմախանութ կոոպերատիվների վարչությունների կողմից ըստ առանձին բաժանմունքների, գյուղերի կամ ըստ անդամների բնակատեղերի (տես կետ 11)։ Այդ ժողովները պետք ե տեղի ունենան դռնբաց, չկոոպերացված մասսաների մասնակցությամբ։



145

14. Հաշվետու ժողովների օրակարգում դրվում են հետևյալ հարցերը.

ա) սպառկոոպի վարչության 1927—28 տնտեսական տարվա հաշվետու զեկուցումը,

բ) վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը,

գ) խանութային հանձնաժողովի զեկուցումը,

դ) սպառկոոպի դիֆերենցիալ փայի անցնելու խնդիրը,

յե) ընտրություններ. 1. Խանութային հանձնաժողովի, 2. Լիազորների,

զ) ընթացիկ հարցեր։

ԾԱՆՈԹ.—Ցանկալի յե շրջանային ու կենտրոնական գյուղերում դնել նաև կուլտ-հանձնաժողովի զեկուցումը։

15. Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումներն այս ժողովներում, կրելով հաշվետու բնույթ, պետք ե շոշափեն կոոպերատիվի ընտրովի մարմինների տարած աշխատանքները և պլանային հեռանկարները, այլև կոոպերատիվի առևտրական քաղաքականության, ոգուտների բաշխման նախագիծը և անելիքների մասին հրահանգը (նակազը)։ Ժողովն իր բոլոր վորոշումները ձևակերպում ե այդ հրահանգի (նակազի) մեջ, հանձնարարելով իր ընտրելիք լիազորներին պաշտպանել այն Լիազորական ժողովում։

16. Հաշվետու ժողովի տեղի, ժամանակի մասին պետք ե անել այնպիսի հայտարարություն, վոր ամբողջ կոոպերացված և վոչ կոոպերացված մասսան տեղյակ լինի ժողովի մասին։

17. Ժողովի կայանալիք վայրը պետք ե ունենա



15022-57

հարմարություններ (ժողովականներին նստելու, լուսավորության, տաքության և այլն)։

18. Ժողովին տարվում է արձանագրություն, այլ և գրանցվում է ժողովի ընթացքում հետաքրքրություն ունեցող ելույթները (կուլակային ելույթները, կազմակերպված շերտավորումներ ժողովում, կանանց և երիտասարդության ակտիվության բնորոշումն և այլն), վորովհետև այստեղ է, վոր կոոպերացված մասսան իր վճռական ու քննադատական խոսքն է ասում, այլ և իր շահերի պաշտպանության առթիվ ելույթներ ունենում։

19. Ժողովի վորոշումներն անմիջապես ձևակերպվում և ուղարկվում են կոոպերատիվի վարչությանն՝ ընտրված լիազորների և խանութային հանձնաժողովների ցուցակների հետ միասին։

## 4. Հաշվետու-վերընտրական ժողովները

20. Հաշվետու-վերընտրական ժողովները հրավիրվում են՝

ա) Բազմախանութ կոոպերատիվի կենտրոնում նոր ընտրված լիազորներից (տես 14-րդ հոդված)։

21. Հաշվետու-վերընտրական ժողովների օրակարգն է.

ա) վարչության 1927-28 տնտ. տարվա հաշվետու զեկուցումը. (զեկուցակից Կուլտ-հանձնաժողովի),

բ) վերստուգիչ-հանձնաժողովի զեկուցումը նույն շրջանի իր գործունեյության և տարեկան հաշվետվության մասին,

գ) հաշվետվության հաստատումն ու օգուտների բաշխումը,



դ) դիֆերենցիալ փայի սիստեմին անցնելու մասին զեկուցում և կանոնադրության փոփոխությունն այս մասին,

ե) կոոպերատիվի 1928—26 տնտ. տարվա պլանի և նախահաշվի քննությունն ու հաստատումը,

զ) ընտրություններ՝ 1. Վարչության, 2. Վերստուգիչ-հանձնաժողովի,

է) ընթացիկ հարցեր։

ԾԱՆՈԹ.—Գավառական և շրջանային կոոպերատիվներում պետք է դրվի Հայկոոպի Վարչության զեկուցումը, վորը կտանի կենտրոնի ներկայացուցիչը։

ԾԱՆՈԹ.—Վորովհետև Հայկոոպի Լիազորական ժողովը նախատեսնվում է միայն 1930 թվականի սկզբներում, ուստի այս հաշվետու վերընտրական ժողովներում Համահայաստանյան համագումարի պատգամավորների ընտրություն չպիտի կատարվի։

22. Միախանութ կոոպերատիվներում հրավիրվում է կոոպ. անդամների ընդհանուր հաշվետու վերընտրական ժողով նույն օրակարգով, ինչ բազմախանութներում (տես կետ 21)։

ԾԱՆՈԹ.—Այս ժողովների ինֆորմացիայի կարգի, ժողովների տեխնիկայի վերաբերյալ ևս պետք է օգտագործել նախորդ ցուցմունքները (տես. 16, 17 և 18. կետ։)

23. Հաշվետու-վերընտրական բոլոր ժողովներին մասնակցում են Հայկոոպի ներկայացուցիչները, վորոնք տալիս են համապատասխան բացատրություններ հաշվետվության, կոոպերատիվի դրության մասին, այլ և ուղղություն են տալիս ժողովի աշխատանքներին։

24. Սպառկոոպի վարչությունը պարտավոր է լիակատար հարմարություններ ստեղծել, վոր թելիա-

*գործերը և թե կոոպերատիվի շարքային անդամները ցանկացած դեպքերում, նախ քան հաշվետու-վերընտրական ժողովը, ծանոթանան ստուգողի հաշվետվության հետ։ Բացի այդ, ժողովի համար պետք է ստեղծվեն համապատասխան հարմարություններ (տես 17-րդ կետ)։*

*25. Հաշվետու-վերընտրական ժողովներում տարվում են մանրամասն արձանագրություններ։ Բացի այդ, լիակատար ինֆորմացիայի համար ժողովում պետք է գրանցվեն ուշադրության արժանի այն բոլոր փաստերը, վորոնց մասին հիշատակված է 18-րդ հոդվածում։ Հատուկ ուշադրությամբ պետք է հաշվառել քաղաքական տրամադրությունները, դասակարգային բնույթ ունեցող ելույթներն ու ցանկությունները, նախաձեռնումներն ու հետաքրքրություն ունեցող առաջարկները։*

## 5. Ինֆորմացիայի կազմակերպումը

*26. Ինֆորմացիայի կանոնավոր կազմակերպումը և ժամանակին Հայկոոպի կազմ-բաժնին ուղարկելը դրվում է՝ ա) Հայկոոպի հրահանգիչների վրա, բ) կոոպերատիվ վարչությունների վրա և գ) ընտրական հանձնաժողովների վրա։*

*ԾԱՆՈԹ.—Հայկոոպի հրահանգիչները հսկում են ներկա հրահանգով նախատեսնվող ինֆորմացիայի անշեղ կիրառման վրա՝ ձեռնարկելով համապատասխան կարգապահական միջոցներ։ Բացի այդ, Հայկոոպի հրահանգիչները պարտավոր են կամպանիայի ընթացքի մասին և յուրաքանչյուր ժողովի մասին առանձին կազմ-բաժնին ուղարկել ինֆորմացիոն նամակներ իրենց տպավորությունների և հասարակական գնահատականի մանրամասնություններով։*



*27. Ինֆորմացիան տարվում է տեղում պատի թերթերում և հատուկ հայտարարությունների միջոցով—ժողովների ժամկետի, տեղի մասին, ժողովների արդյունքների և վորոշումների մասին։*

*28. Ինֆորմացիայի կանոնավոր կազմակերպումը մանավանդ անհրաժեշտ է Հայկոոպի համար։ Այդ ինֆորմացիան պետք է կատարվի հետևյալ պարտադիր մինիմում ծրագրով. Հայկոոպին պետք է ներկայացնել՝*

*ա) ստուգողի հաշվետու վերընտրական պլանի պատճենը և այդ պլանի կիրառման հաշվետվությունը,*

*բ) բաժանմունքներում և գյուղերում կազմակերպված հաշվետու ժողովների արձանագրությունների պատճենները,*

*գ) նոր ընտրված լիազորների ցուցակը.*

*դ) նոր ընտրված խանութային հանձնաժողովների անդամների ցուցակը,*

*յե) հաշվետու վերընտրական ժողովների արձանագրությունների պատճենները,*

*զ) նորընտիր վարչության անդամների ցուցակը.*

*է) նորընտիր վերստուգիչ հանձնաժողովների անդամների ցուցակը,*

*ը) յուրաքանչյուր կոոպերատիվի աշխատող վարձու ապարատի (ընտրովի և վարձու, պատասխանատու և տեխնիկական) անվանացուցակը,*

*թ) դիֆերենցիալ փայի անցնելու մասին վորոշման պատճենը,*

*ժ) ոգուտների բաշխման վորոշման պատճենը,*

*ժա) չքավորների կոոպերացման արդյունքները,*

*ժբ) հաշվետու-վերընտրական կամպանիայի ըն-*

թացքում տեղի ունեցած ժողովների հաշվետությունն ու բնութագիրը։

ԾԱՆՈԹ.—Այս բոլոր ինֆորմացիայի ձևերը ժամանակին ուղարկված են։

29. Պետք է անպայման տեղում կազմակերպել նաև կանոնավոր ինֆորմացիա մամուլին։ (Խ. Հ.-ին, Մաճկալին և այլն)։

30. Անկախ ընթացիկ ինֆորմացիայից, յուրաքանչյուր սպառկոոպն իր հաշվետու-վերընտրական կամպանիան վերջացնելուց ոչ ուշ քան մի շաբաթ, ներկայացնում է Հայկոոպի Կազմ-բաժնին ընդհանուր զեկուցում՝ ՀՍԽՀ-ի սպառ. կոոպ. հաշվետու-վերընտրական կամպանիայի հավաքական զեկուցում կազմելու համար։

---

## ԿՈՒԼՏ ՅԵՆԹԱԲԱԺՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՌ-ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Պարտավորեցնել բոլոր վարչություններին իրենց հաշվետու-զեկուցումների մեջ առանձնակարգ, խնդիր դարձնել սպառկոոպի կուլտ-լուսավորության աշխատանքները և նրանց արդյունքները։

2. Գործող և բացվելիք կոոպ-խմբակներում տանել ուժեղացած պարապմունք այն մտքով, որ ունկնդիրներից ամենաակտիվներն օգտագործվեն առաջ քաշման գծով։

3. Ինչպես խմբակավարներին, այնպես էլ պատա-



րաստված ունկնդիրներին մասնակից դարձնել կամպանիային՝ հանձնարարելով նրանց զեկուցումներ և կազմակերպչական աշխատանքներ։

4. Վերընտրական կամպանիայի ընթացքում հրատարակել մի քանի մասսայական բնույթ ունեցող գրքույկներ (չքավորների, աշխատավորուհիների կոոպերացումը, կուլտ-մասսայական աշխատանքներ, դիֆերենցիալ փայավճարային սիստեմը և այլն), մի պլակատ և համապատասխան լոզունգներ։

5. Բազմախանութ սպառկոոպների լիագորական ժողովներում դնել կուլտ-կոմիսիաների զեկուցումներ՝ ինքնաքննադատության միջոցով յերևան հանելու սպառկոոպի բացերը՝ կուլտ-կրթական աշխատանքների ճակատում։

6. Հրատարակել «Մաճկալ»-ին կից «Հայկոոպ»-ի հերթական համարը յերկու շաբաթը մեկ անգամ՝ հետևյալ բովանդակությամբ.

№ 1. վերընտրական կամպանիային վերաբերող հրահանգներ,

№ 2—5. վերընտրական կամպանիայի ընթացքը,

№ 6. վերընտրական կամպանիայի արդյունքները.

7. Հրատարակել «Միտինգ-մրցանակ»-ի արդյունքները և կենտ-ժյուրիի վորոշումները մրցաբաշխման վերաբերմամբ։ Մրցանակների բաշխումը կապել սպառկոոպի վերընտրական կամպանիայի հետ։

8. Վերընտրական կամպանիայի ընթացքում աջակցել սպառկոոպներին բանալու նախատեսված կուլտ-կենցաղային ձեռնարկներ գլխավորապես կոլտնտեսությունների մեջ։

9. Հաշվետու վերընտրական կամպանիայի ընթացքում հաշվառել այն բոլոր կուլտ-հարցերը, վորոնք առաջադրվում են անդամների կողմից, մշակելով նրանց գործնական մեթոդները։

10. Վերընտրական կամպանիայի ընթացքում ավելացնել կինո-ապարատների թիվը և կինո-ցուցադրումներ կազմակերպել այն բոլոր սպառկոոպներում, վորտեղ կայանալու յեն տարեկան ժողովներ։

11. Վերընտրական կամպանիայի ընթացքում ուժեղացնել մեր աշխատանքներն աշխատավորուհիների կոոպերացման գործում։ Ստուգել գոյություն ունեցող կուլտ-կենցաղային ձեռնարկները և ընդհանուր զեկուցումների մեջ առանձնապես կանգ առնել նրանց վրա։

12. Վերընտրական կամպանիայի ընթացքում առանձին ուշադրություն դարձնել կոոպ-անկյունների աշխատանքների վրա։ Կպցնել այնտեղ հաշվետվության պլակատ և համապատասխան լոզունգներ։

13. Պատի թերթի հրատարակումը կանոնավորել, Հրատարակել պատի թերթի հատուկ համարներ՝ նըվիրված վերընտրական կամպանիային։

14. Ուժեղացնել յերիտասարդության կոոպերացման աշխատանքները։ Գումարել գավառային մասշտաբով յերիտխորհրդակցություններ։

---



## ՀՍԽՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՓԱՅԱՎՃԱՐԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԱՅԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(Թեզիսներ զեկուցողների համար)*

1. Խորհրդային Միության տնտեսական սոցիալիստական վերակառուցման և նրան զուգընթաց սպառողական կոոպերացիայի զարգացման արագ թափի հետևանքով նրա առաջիկա աշխատանքներն ընթանալու յեն դասակարգային պայքարի ավելի սրման և հատկապես գյուղական կապիտալիստական ելեմենտների թշնամական ու ակտիվ դիմադրության պայմաններում։

2. Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում կոոպերացիայի (մանավորապես սպառողականի) դերը վճռական է։ Սպառողական կոոպերացիայի գործունեյության ծավալումը և ուժեղացումն անմիջական հաղթանակն է գյուղի կուլակային ելեմենտների դեմ։ Այստեղից և՛ կուսակցության և՛ խորհրդային իշխանության ամենուրեք ջանքերն ուժեղացնելու կոոպերացիան և համախմբելու նրա շուրջ բատրակ-չքավորական տարրերին և միջակ գյուղացիությանը։

3. Սակայն սպառողական կոոպերացիան չի կարող առանց ուժեղ ֆինանսական բազայի, կամ բավարար դրամագլխի կատարել իրեն առաջադրված խնդիրները։ Այդ դառնում է հրամայական վաղվա լայնածավալ անելիքների տեսակետից։ Ավելացնել

փայադրամագլուխը, ուժեղացնել նորմալ կուտակումը—ահա հիմնականն ինչ պիտի ապահովել առաջիկա գործունեյության ընթացքում։

4. Սպառողական կոոպերացիայում ընդունված կանոնադրական միասնական փայավճարային սիստեմն մեր այժմյան պայմաններում (գյուղի տնտեսական շերտավորման և քաղաքի բանվոր-ծառայողների աշխատավարձի տարբեր դրույքների) կորցրել է իր կազմակերպչական և սոցիալական նպատակահարմարությունը։

5. Ընդհակառակը, մեր շինարարության բոլոր բնագավառներում (հարկային քաղաքականություն, բնակարանային վարձի կոպարների վորոշման և այլն) վճարող մասսաների բաժանումը ըստ յեկամուտի միշտ տվել է ավելի լավ արդյունքներ, ապացուցելով իր գործնական նպատակահարմարությունը։

6. Սպառողական կոոպերացիայի փաստական փայակուտակումն ևս նույն արդյունքներն է ցույց տալիս։ Գյուղական կոոպերատիվում, վորտեղ կանոնադրական փայը 10 ռուբլի յե, փաստորեն գանձված է թույլ տնտեսություններից՝ 4—5 ռուբլի, միջակներից՝ 7—8 ռուբլի, իսկ ուժեղ տնտեսություններից՝ 10 ռուբլի։ Բանվորական կոոպերացիայում այդ տատանումներն նույնպես նկատվել են, սակայն ավելի քիչ չափով։

7. 1927—28 տնտ. տարում փայակուտակումն ամբողջ ցանցում տվել է նախորդ տարիների համեմատությամբ զգալի արդյունքներ, փայադրամագլուխն աճել է 338,672 ռուբ. մինչև 730,130 ռուբ. (աճումն ավելի քան յերկու անգամ) միջին փայը բարձրացել է 3 ռ. 79 կոպ. մինչև 6 ռ. 49 կ.։



ԾԱՆՈԹ.—Զեկուցողներն այստեղ պետք է բերեն տվյալներ իրենց կոոպերատիվ փայակուտակման արդյունքների մասին։

8. Սակայն միջոցների կուտակման այդ տեմպը բավարար չի կարելի հաշվել, յեթե նկատի առնենք հետևյալը.

1) շուկայի ընդգրկման թափի և շրջանառության ուժեղացումը, սպասարկման վորակի բարձրացումը, պահեստների և խանութների շինարարությունը և այլն։

2) Վոր պետարդյունաբերության ապրանքներ բաց թողնելու պայմանները շարունակվելու յեն դժվարանալ, ինչպես և վարկային լիմիտները՝ յերկրի ինդուստրալացման հետևանքով (այդ բղխում է յերկրի ինդուստրալացման շահերից) ել ավելի յեն կրճատվելու հետագա ժամանակաշրջանում։ Հետևապես սպառկոոպերացիայի սեփական ֆինանսական բազան ուժեղացնելու խնդիրը թելադրվում է հենց սպառողների շահերից, նրանց կանոնավոր ու առանց ընդհատումների ապրանքամատակարարումն ապահովելու համար։

9. Դիֆերենցիալ փայավճարային սիստեման վճռական մի բեկումն է սպառցանցի ֆինանսների կուտակման բնագավառում. կոոպերատիվի ամեն մի անդամ փայավճար է մուծում ըստ իր մոտավոր յեկամուտի գումարի։ Գյուղում փայավճարային չափանիշը գյուղատնտեսական հարկի վճարման կարգն է (հարկից ազատվողներ, նորմայով հարկադրվածներ, և անհատական կարգով հարկադրվածներ), իսկ քաղաքներում՝ բանվորների ու ծառայողների աշխատավարձի գումարը (կուղարկվի Հայկոոպի կողմից հաստատված և առաջադրվող շերտավորման տախտակը)։

10. Դիֆերենցիալ փայը մտցվում է սույն տարվա ապրիլ ամսից, այդ գումարը մուծելու ժամկետ առաջադրվում է նշանակել գյուղերի սպառկոոպների համար՝ յերեք տարի, բանվորական կոոպերատիվների համար յերկու տարի։

11. Գյուղի չքավորական մասն այսուհետև ևս, և դեռ առավել թափով, պետք է կոոպերացվի ի հաշիվ չքավորական ֆոնդերի։ Առաջիկա յերկու տարում պետք է ապահովվի դրանց լրիվ ընդգրկումը սպառկոոպի ցանցում և մուծվի ամբողջ փայավճարը։

## 1927—1928 ՏՆՏ. ՏԱՐՎԱ ՈԳՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

(Հաստատված է Հայկոոպի վարչության փետրվարի 20-ի նիստում)։

| ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (Ի՞նչ նպատակի) | Գյուղական սպառկոոպ-ների համար | Բանվորական և քաղ. կոոպերատիվներում *) | Քաղաքային և գյուղական բաժանմ. ունեցող կոոպերատիվների համար **) |
|---|---|---|---|
| 1. Հիմնական դրամագլխին | 40% | 40 | 40 |
| 2. Յերկարատև վարկավորման ֆոնդին | 10 | 10 | 10 |
| 3. Պահեստի դրամագլխին | 10 | 10 | 10 |
| 4. Չքավորների կոոպ. ֆոնդին | 15 | — | 10 |
| 5. Կուլտ-կրթական և կենցաղ. | 15 | 25 | 15 |
| 6. Բանվորների ու ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդին | — | 10 | 10 |
| 7. Այլ նպատակների (շինարարական) | 10 | 5 | 5 |
| ԳՈՒՄԱՐ | 100 | 100 | 100 |

*) Բոլոր բանկոոպների և Էջմիածնի ու Ղարաքիլիսայի սպառկոոպների համար։

**) Նոր-Բայազետի, Դիլիջանի, Բեշիշքենդի, Մեղրիի և Գորիսի սպառկոոպների համար։



## 1. ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Սպառողական կոոպերացիայի 1927—28 տնտ. տարվա գործունեյությունն ընթացել է մի շարք տնտեսական դժվարությունների պայմաններում։ Այդ դժվարություններից հիշատակության արժանի յեն՝

ա) վորոշ ապրանքների ժամանակավոր պակասությունը մանրածախսի շուկայից, բ) կոոպերատիվ տնտեսության մեջ հաճախակի նկատվող ֆինանսական դժվարությունները, բխող շրջանառության արագ աճման հանգամանքից, գ) վարկերի կրճատումը և դ) ապրանքների գնման պայմանների վատթարանալը։

2. Պետք է վորոշակի ընդգծել, վոր այդ դժվարություններն ունեն ընդհանուր բնույթ, ժամանակավոր են և բացատրվում են բացառապես մեր տնտեսության չտեսնված թափի ու զարգացման ներկա շրջանին հատուկ պատճառներով։

3. Սակայն մեր դժվարությունների մեջ պակաս տեղ չունեն նաև մի շարք կոոպերատիվների և նրա դժվարությունների հետ անմիջապես կապ ունեցող պատճառները։ Այս թվում կարող ենք հիշատակել՝ ա) կոոպերատիվ հասարակայնության թուլությունը, բ) փայավճարների գանձման թափի դանդաղումը, գ) կոոպերատիվի ապարատի մեջ գոյություն ունեցող բյուրոկրատիզմը, խնամիությունները, քաշքշուկները և այլ բացերը, դ) կոոպերատիվ համապատասխան աշխա-

տողների պակասը և, վերջապես, ե) կոոպերատիվի դանդաղ ընդգրկումը մասնավորի ցանցի սպասարկմանը լրիվ փոխարինելու նպատակով։

4. Այս դժվարությունների ու բացերի հետևանքով սպառողական կոոպերացիայի և խորհրդային կարգերի թշնամի ու անհարազատ տարրերը մի շարք պրովակացիոն լուրերով սպառողական ցանցի հաշվետու վերընտրական կամպանիան օգտագործելու յեն իրենց դասակարգային նպատակներով։ Անհրաժեշտ է, որ զեկուցող ընկերները պատրաստ լինեն վերոհիշյալ լուրերին տալ համապատասխան բացատրություն՝ մերկացնելով լայն կոոպերացված մասսաների առաջ լուրերի իսկական դասակարգային աստառը։

5. Ի՞նչով է բացատրվում մեր շուկայում նկատվող ապրանքային պակասությունը։ Խորհրդային իշխանության հակառակորդները և շատ անգիտակից քաղաքացիներ այդ բացատրում են մեր պետական գործարանների արտադրության պակասելով։ Համամիութենական Առևտրի Ժողկոմատի տվյալներից յերևում է, որ մեր պետական արդյունաբերությունը շուկա յե հանել լայն սպառման (մասսայական) անհրաժեշտ ապրանքներ՝

| | | |
|---|---|---|
| 1926—27 տնտ. տարում | 7.495 միլիոն ռ. | |
| 1927—28 » » | 7.865 » » | |

Մինչդեռ նույն յերկու տարիներում ազգաբնակության գնողական ֆոնդն արդյունաբերական ապրանքների համար յեղել է՝



| | | |
|---|---|---|
| 1926—27 տնտ. տարում | 7.592 միլիոն ռ. | |
| 1927—28 » » | 8.030 » » | |

Այս թվերը ցույց են տալիս, որ համամիութենական մասշտաբով ազգաբնակության գնողական ունակությունն ավելի յե (այսինքն՝ նա ապրանքներ գնելու համար ավելի շատ դրամ ունի), քան մեր արդյունաբերությունը կարող եր առաջարկել շուկային։

6. Միաժամանակ վերջին յերկու տարիներում թե պետական արդյունաբերությունը, թե կոոպերացիան, համաձայն խորհրդային իշխանության հրահանգի, կատարեցին գների իջեցում 10 տոկոսով։ Այս իջեցումը նույնպես ազգաբնակության տվեց ավելի քան 200 միլիոն խնայողություն, և հետևաբար նրա գնողական ունակությունն ավելի բարձրացրեց։

7. Մեր արդյունաբերությունը տարեց-տարի աճում է և նրա արտադրած սպառման ապրանքների գումարը տարեց-տարի բարձրանում է։ Ահա մի քանի թվեր։ Մեր արդյունաբերությունն արտադրել է 1925—26 տնտ. տարում 11.919 միլիոն ռուբլու բոլոր տեսակի ապրանքներ, 1926—27-ին՝ 13.153 միլիոն ռուբլու։ Այդ գումարներից 1925—26-ին՝ սպառման ապրանքներ—8.133 միլիոն ռուբլու, իսկ 1926—27-ին 8.571 միլիոն ռուբլու։ Այդ թվերը ցույց են տալիս, որ մեր արդյունաբերությունը պլանաչափ կերպով աճում է։

8. Չպետք է մոռանալ, որ թե գյուղացիության յեկամուտները տնտեսությունից և թե բանվորների

աշխատավարձը —նույնպես տարեց-տարի բարձրանում են։ Ազգաբնակության ընդհանուր յեկամուտը յեղել է՝

1925—26 ին 12.184 միլիոն ռուբլի,
1926—27-ին 13.562 » »

9. Պարզ է, վոր ազգաբնակության յեկամուտների բարձրացնելու հետևանքով Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիներն ավելի լավ են սնվում ու կենսական այլ պահանջներ բավարարում, քան մինչև պատերազմը։

Այս մասին հետաքրքիր են հետևյալ թվերը։ Յեթե պատերազմից առաջ գյուղացին սպառում էր, ենթադրենք, 100 ռ. հետևյալ մթերքներից վորևե մեկից, ապա ներկայումս նա սպառում է.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սև հաց (րժանոյ) | 100 ռ. | փոխարեն | 95 | ռուբլի |
| Ցորենի հաց | » | » | 164 | » |
| Ձկնեղեն | » | » | 63 | » |
| Միս և ճարպ | » | » | 157 | » |
| Ձեթ (պասուց յուղ) | » | » | 97 | » |
| Կովի յուղ | » | » | 142 | » |
| Շաքար | » | » | 128 | » |
| Հագուստեղ. վոտնամ. | » | » | 115 | » |

Ինչ են ցույց տալիս այս թվերը. այն, վոր գյուղացու գործածության մեջ սև հացը փոխարինվում է ցորենի հացով, ձկնեղենը՝ մսով, ձեթը—յուղով։ Ավելացել է շաքարի, հագուստեղենի պահանջը։

10. Բացի այդ, հատկապես Խորհրդային Հայաստանի համար, անհրաժեշտ է շեշտել, վոր վորոշ ապ-



րանքների պակասը բացատրվում է (բացի վերը հիշված ընդհանուր պատճառներից) հետևյալով. Մեր հանրապետությունը չի կարող լրիվ կերպով բավարարել Հայաստանի գյուղացիության արտադրած հացով։ Տարեց-տարի մեր յերկրի ինդուստրալացման հետևանքով մեր սպառող մասսաներն են աճում քաղաքներում, գյուղացիության մի մասն էլ մյուս կողմից՝ անցնելով բամբակի, ծխախոտի և այլ կուլտուրաների մշակման, սեփական հողից չի կարողանում բավական քանակությամբ հաց ստանալ և, պարզ է, վոր նա յել դառնում է Հայաստանի հաց սպառող մասսայի մի մասը։ Յել, վերջապես, մեր յերկիրն իր բնական պայմաններով միշտ էլ առանց հացի ներմուծման չի կարողացել իր սեփական հացով լրիվ կերպով բավարարվել։ Խորհրդային կառավարությունը շատ հաճախ հացի մթերման գործն ուժեղացնելու համար պետական արդյունաբերության արտադրած ապրանքների մեծ մասն ուղարկում է հացամթերման շրջանները և այդ ժամանակ հաց սպառող շրջանները (ինչպիսին Հայաստանն է) անխուսափելի կերպով զգում են այս կամ այն ապրանքների պակասը։

11. Վերջապես մոռացության չպետք է տալ, վոր Խորհրդային ամբողջ Միության համար անհետաձգելի խնդիր է մեր յերկրի ինդուստրալացումը, վորը պահանջում է մեծ գումարներ, իսկ այդ գումարները մեր կառավարությունը բացառապես ստանում է մեր

միության բանվորա-գյուղացիական մասսաներից պետական փոխառությունների միջոցով, մյուս կողմից էլ կոոպերատիվների շրջանառություններից աստիճանաբար հանելով պետական միջոցներն այն հաշվով, որ կոոպերացիան ինքն իր միջոցներով աշխատելուն անցնի մոտակա տարիների ընթացքում։ 1927—28 տնտ. տարում սպառկոոպերացիայի վարկերը կրճատվել են մոտ 200 միլիոն ռուբլու, 1928—29-ին (առաջին կվարտալում)՝—25 միլիոնի։

12. Այսպիսով մեր արդյունաբերության վերելքը և սպառողական որոշ ապրանքների արտադրանքը, համեմատած ԽՍՀՄ-ի բանվորագյուղացիական մասսաների գնողականության ու տնտեսական դրության հետ, որոշ տարբերություն ունի, և մի քանի ապրանքների վերաբերմամբ նկատվող պակասը զգացվելու յե․ այդ անխուսափելի յե, մոտակա մի, յերկու տարիների ընթացքում։

---

ԾԱՆՈԹ.—Այս խնդիրների մասին զեկուցելիս խորհուրդ ենք տալիս ձեռքի տակ ունենալ և օգտվել՝
Շ. ԴՎՈՅԼԱՑՑ'Ի.—Ապրանքային սովի մասին.
Զ. ԼԱՎՐԵՆՏԵՎ.—Հացի մասին—գրքույկներից։

ՀԱՅԿՈՈՊԻ ԿԱԶՄ-ԲԱԺԻՆ

---

## 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

*(Թվական տվյալներ)*

1. ԽՍՀՄ-ն սպառողական կոոպերացիան վերջին յերեք տարիների ընթացքում ունեցել ե աճման մի աննախընթաց թափ։ Ներկայումս նա մեր բանվորա-գյուղացիական մասսաների գլխավոր ապրանքամատակարարողն ե և միաժամանակ շուկայի կանոնավորողը։

2. Բանվորա-գյուղացիական մասսաների կոոպերացման նվաճումները յերևում են հետևյալ թվական տվյալներից։

Փայատերերի ընդհանուր թիվը յեղել ե՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1926 | թվի | հոկտեմբերի | 1 ին | 12.406.557 |
| 1927 | » | » | » | 15.975.938 |
| 1928 | » | » | » | 20.152.000 |

3. Սպառողական ընկերությունների և խանութների թիվը նույն ժամանակաշրջանում հետևյալ աճումն ե ցույց տալիս։

| | Ընկերութ. | Խանութներ |
|---|---|---|
| 1926 թվի հոկտեմբերի 1-ին | 28.631 | 62.700 |
| 1927 » » » | 28.616 | 71.939 |
| 1928 » » » | 28.418 | 85.028 |

4. Սպառողական կոոպերացիայի ընդհանուր շրջանառությունը (թե մեծաքանակ, թե մանրածախ) տարեց տարի աճում ե, Հետևյալ․ թվերը ցույց են տալիս այդ շրջանառության ընդհանուր գումարը և

առանձին թվերով սպառողական կոոպերացիայի մանրածախ շրջանառությունը՝

| | Ընդհանուր (մեծածախ. և մանրածախ) շրջանառությունը | | Մանրածախ շրջանառությունը |
|---|---|---|---|
| 1925—26 թվին | 7.107 միլ., | վորից | 4.108 միլ. |
| 1926—27 » | 10.070 » | » | 5.431 » |
| 1927—28 » | 14.570 » | » | 7.300 » |

5. Սպառկոոպերացիայի շրջանառությունների այդպիսի աճման զուգահեռ կրճատվում են նրա հավելումների տոկոսները և օգուտի միջին տոկոսը։ Թվական տվյալներից յերևում է, վոր սպառկոոպերացիայի մանրածախ հավելումներն ու օգուտները հետևյալ տոկոսներն են ունեցել վաճառքի շրջանառության գումարի համեմատությամբ։

Քաղաքի յեվ բանվ. կոոպերատիվներ

| | | | |
|---|---|---|---|
| 1925—26 տնտ. տ. | 13,24%, | վորից օգուտ | 2,04% |
| 1926—27 » » | 11,10 » | » » | 0,70 » |
| 1927—28 » » | 11,35 » | » » | 0,94 » |

Գյուղական կոոպերատիվներում

| | | | |
|---|---|---|---|
| 1925—26 տնտ. տ. | 12,3%, | վորից օգուտ | 3,1 % |
| 1926—27 » » | 10,4 » | » » | 2,1 » |
| 1927—28 » » | 10,75 » | » » | 1,75 » |

6. Միաժամանակ տարեց-տարի սպառկոոպերացիան իր ֆինանսական սեփական միջոցներն (փայադրամագլուխը և հիմնական դրամագլուխը) ուժեղացնում է։ Վերջին յերեք տարիների թվերը ցույց են տալիս, վոր սպառկոոպերացիան ունեցել է առ 1-ն հոկտեմբերի.



ա) Քաղ. յեվ բանվորական կոոպերատիվներն

| | Փայադրամագլուխ | Այլ դրամագլուխներ |
|---|---|---|
| 1926 թվի | 26 միլ. 600 հազար | 73 միլ. 400 հազ. |
| 1927 » | 40 » 800 » | 108 » 300 » |
| 1928 » | 78 » 778 » | տվյալներ չկան |

բ) Գյուղական կոոպերատիվները

| | Փայադրամագլուխ | Այլ դրամագլուխներ |
|---|---|---|
| 1926 թվին | 22 միլ. 600 հազար | 59 միլ. 600 հազ. |
| 1927 » | 35 » 600 » | 100 » 200 » |
| 1928 » | 102 » 975 » | 115 » 700 » |

ԾԱՆՈԹ.—Փայադրամագլխի գումարների մեջ «ա» խըմբում մտնում են նաև յերկաթուղային կոոպերատիվների փայադրամագլուխները։

7. Միջին (մի անդամից գանձված) փայավճարի գումարը նույն տարիների վերաբերմամբ հետևյալ պատկերն ունի։

| | Քաղաքի յեվ բանվ. կոոպերատիվներում | Գյուղական կոոպերատիվներում |
|---|---|---|
| 1926 թվի հոկտ. 1-ից | 4 ռ. 72 կ. | 3 ռ. 11 կ. |
| 1927 » » » | 7 » 72 » | 4 » 10 » |
| 1928 » » » | 10 » 20 » (մոտ.) | 7 » (մոտ.) |

3. Սպառողական կոոպերացիան միայն իր սեփական միջոցներովը չի, վոր տանում է իր աշխատանքները։ Նրա շրջանառության մեջ գտնվում են թե պետարդյունաբերության, թե վարկային հիմնարկների մեծ գումարներ։ Այդ գումարները, վոր կազմում են սպառողական կոոպերացիայի վողջ սեփական

(ցանցի և կենտրոնների) փոխատու միջոցները հետևյալ թվերումն են արտահայտվում.

| | |
|---|---|
| 1926 թվի հոկտեմբերի 1 | 865 միլիոն |
| 1927 » » » | 1073 » |
| 1928 » ապրիլի » (մոտավոր) | 2188 » |

9. Կարևոր է մի քանի թվեր բերել նաև այն ստուգիչ թվերի մասին, որ սպառկոոպերացիան կազմել է իր աշխատանքների վերաբերմամբ 1928—29 տնտ. տարվա համար.

Առ 1-ն հոկտեմբերի փայատերերի ընդհանուր թիվը յենթադրվում է հասցնել 28 միլիոն 789 հազարի, փայադրամագլխի ընդհանուր գումարը՝ 349 միլիոն ռուբլու (դիֆերենցիալ փայավճարի կիրառման դեպքում այդ գումարը կարող է 40—50 տոկոսով բարձրանալ).

Սպառողական կոոպերացիան 1928—29 տնտ. տարում պլանով պետք է ունենա 8.682 միլիոն ռուբլի մանրածախս շրջանառություն. Ընդհանուր առմամբ սպառողական կոոպերացիայի գործունեյության բոլոր բնագավառների նորմալ աճումը սույն հաշվական տարում հատուկ թափ պիտի ստանա հասարակայնության ակտիվացման ու ֆինանսական առողջ բազա ստեղծելու հիմնական ուղիներով.



## 3. ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՀՍԽՀ-ՈՒՄ

(Հայկոոպը և իր ցանցը թվերով)

1. Վերջին տարիներում Հայաստանի սպառողական կոոպերացիան իր կազմակերպչական ու տնտեսական գործունեյության բոլոր բնագավառներում ցույց է տալիս մինչև այժմ չեղած վերելք և աճման թափ. Թվական տվյալներն այս մասին բերված են հետևյալ թեզիսներում.

2. Սպառողական ընկերությունների ու խանութների թիվն աճել է հետևյալ տվյալների համաձայն.

| | Ընկերության թիվը | Խանութների թիվը |
|---|---|---|
| 1926 թվի հոկտեմ. 1 | 81 | 309 |
| 1927 » » » | 90 | 366 |
| 1928 » » » | 96 | 439 |

Այսպիսով, յերկու տարվա ընթացքում սպառկոոպերատիվների թիվն աճել է 18 և կես տոկոսով, իսկ խանութների թիվը՝ 42 տոկոսով.

3. Ավելի մեծ թափով աճում է կոոպերացիայի անդամագրվող մասսան, ըստ նույն տարիների տվյալների սպառողական կոոպերացիայի անդամների թիվն աճել է՝

| | |
|---|---|
| 1926 թվի հոկտեմբերի 1-ից | 65.740 հոգի |
| 1927 » » » | 89.422 » |
| 1928 » » » | 112.489 » |

Աճումը յերկու տարվա ընթացքում հավասար է 71 տոկոսի.

4. ՀՍԽՀ տնտեսությունների կոոպերացումը ներկայումս հետևյալ պատկերն է ստացել:

| | | |
|---|---|---|
| Կոոպերացումը | 1926 թվի հոկտ. 1-ին | 35,2 % |
| » | 1927 » » » | 47,9 » |
| » | 1928 » » » | 60,3 » |

Այս նշանակում է, որ մեր տնտեսությունների յուրաքանչյուր 100-ից 60-ը սպառողական կոոպերացիային անդամագրված են և օգտվում են նրա ծառայություններից:

5. Հետաքրքիր են սպառողական կոոպերացիայի փայադրամագլխի և միջին փայավճարի աճման վերաբերյալ տվյալները.

| | Փայադրամագլուխ | Մի անդամից գանձված է |
|---|---|---|
| 19.6 թվի հոկտեմբ. 1 | 234.925 | 3 ռ. 57 կ. |
| 1927 » » » | 338.672 | 3 » 79 » |
| 1928 » » » | 730.130 | 6 » 49 » |

Այսպիսով մենք տեսնում ենք, որ սպառողական կոոպերացիայի սկզբնական ցանցի փայադրամագլուխն աճել է 210 տոկոսով, իսկ միջին փայը՝ 82 տոկոսով: Ուրիշ խոսքով ասած՝ միջին փայի գումարը ավելի դանդաղ է աճում, քան ցանցի ընդհանուր փայադրամագլուխը: Իսկ այդ հետևանք է փայավճարների թույլ գանձման:

6. Սպառողական ընկերությունները նույն տարիների ընթացքում ունեցել են հետևյալ շրջանառությունները:

| | |
|---|---|
| 1925—26 տար. | 13 միլիոն 430 հազար |
| 1926—27 » | 18 » 429 » |
| 1927—28 » | 25 » 814 » |



Շրջանառության գումարն այսպիսով յերկու տարում բարձրացել է 92,2 տոկոսով:

7. Այդ վաճառքի շրջանառության մեջ սկզբնական ցանցն ունեցել է հավելումների — առևտրական ծախքերի և օգուտների հետևյալ տոկոսները:

| | Հավելում | Ծախքեր | Օգուտ |
|---|---|---|---|
| 1925—26 տարում | 13,0% | 10,6 % | 2,4% |
| 1926—27 » | 10,8 » | 9,6 » | 1,2 » |
| 1927—28 » | 11,4 » | 9,5 » | 1,9 » |

8. Սպառողական կոոպերացիայի կենտրոնը՝ Հայկոոպն ևս նույն տարիների շրջանում ունեցել է նվաճումների մի ամբողջ շարք:

ա) Հայկոոպի շրջանառությունները՝

| | | |
|---|---|---|
| 1925—26 տնտ. տարում | 7 միլ. | 109 հազար |
| 1926—27 » » | 12 » | 156 » |
| 1927—28 » » | 17 » | 500 » |

Այսպիսով յերկու տարվա ընթացքում Հայկոոպի շրջանառությունն աճել է համարյա 2 և կես անգամ:

9. Այդ շրջանառությունները Հայկոոպը կատարել է կենտրոնական պահեստներից, բազաներից, և տրանզիտ կարգով: Բազաների և տրանզիտային շրջանառություններն տարեց-տարի ավելի մեծ տեղ են բռնում Հայկոոպի շրջանառության մեջ: Թվական տվյալները հետևյալ պատկերն ունեն.

| | Բազաներ | Տրանզիտ |
|---|---|---|
| 1925—26 տ. տ. | 1 574.000 | 1.494.000 |
| 1926—27 » | 3.261.000 | 2.298.000 |
| 1927—28 » | 6.400.000 | 4.500.000 |

Այս թվերը ցույց են տալիս, որ ապրանքների

մատակարարման գործը Հայկոոպը մոտեցնում է ցանցին։

10. Հայկոոպի շրջանառությունները ՀՍԽՀ-ի մեծաքանակ առևտրի ընդհանուր գումարի մեջ հետևյալ տեսակարար կշիռն ունի։

| | Մեծաքանակ շրջան. ընդհ. գումարը ՀՍԽՀ | Հայկոոպի մեծաքանակ շրջանառությունը | Տեսակարար կշիռը |
|---|---|---|---|
| 1925—26 | 28.508.000 | 7.109.000 | 24,9% |
| 1926—27 | 31.935.000 | 12.156.000 | 38,0 » |
| 1927—28 | 38.988.000 | 17.500.000 | 44,8 » |

11. Հայկոոպի հավելումները, ծախքերը տարեցտարի կրճատվում են, և միաժամանակ, նրա աշխատանքի վորակի լավացման ապրանքների ասսորտիմենտի լրիվ լինելու հետևանքով, նրա ցանցն ավելի յե կապվում Հայկոոպի հետ։

| | | Հավելումներ | Ծախքեր |
|---|---|---|---|
| 1925—26 | . . . | 7.50 տոկոս | 5,40 տոկոս |
| 1926—27 | . . . | 5,46 » | 3,66 » |
| 1927—28 | . . . | 4,75 » | 3,24 » |

Իսկ շրջանառության 100 տոկոսից Հայկոոպն իր ցանցի հետ նույն տարիներում կատարել է 73,5 տոկոս (1925—26-ին), 82 տոկոս (1926—27 թ.) և 88,0 տոկոս (1927—28 ին)։ Այսպիսով՝ Հայկոոպի գործունեյության բոլոր ցուցանիշների մեջ մենք ունենք անվիճելի նվաճումներ։

12. Այս նվաճումների հետ զուգահեռ սպառկոոպերացիան (Հայկոոպն ու իր ցանցը) ունի մեծ թերություններ և բացեր հատկապես ապարատի տեխնիկական սպասարկման գործում. պահեստների, խա-



նութների և ճաշարանների համար շենքերի բացակայությունն առաջադրում է հիմնական շինարարության խնդիրը, վորի համար մեծ գումարների ներդրումներ են պահանջվում։ Վերջապես սպառկոոպերացիայի ֆինանսական սեփական բազայի ամրացումը հերթական է դարձնում փոխառու միջոցներից աստիճանաբար ազատվելու անհրաժեշտությունը։ Հատուկ տեղ ունի սպառկոոպերացիայում նրա ապարատի թարմացումը. այդ նպատակով պետք է ձեռք առնվեն մի շարք կազմակերպչական միջոցներ թե կենտրոնի և թե տեղերի կողմից (նոր կադրերի պատրաստում, աշխատող կադրերի վերապատրաստում, ապարատի զտում, առաջքաշում և այլն)։

........................................ սպառողական ընկերության հաշվետու զեկուցման թվական տվյալները.—

ա) Անդամն. թվի յեվ փայադրամագլխի աճումը

| Ժ Ա Մ Կ Ե Տ | Անդամների թիվը | Փայադրամագլուխը |
|---|---|---|
| Առ 1-ն հոկտ. 27 թիվ | | |
| 1-ին յեռամսյակ . . | | |
| 2-րդ » . . . | | |
| 3-րդ » . . . | | |
| 4-րդ » . . . | | |
| Առ 1-ն հոկտ. 28 թիվ | | |

## բ) Փայավճար են մուծել

| ԳՈՒՄԱՐ (Մուծել են) | Քանի հոգի | Այս թվում չքավորական ֆոնդից |
|---|---|---|
| 3 ռ. ցած . . . . | | |
| 3 - 5 ռ. . . . . | | |
| 5 - 8 ռ. . . . . | | |
| 8 - 10 ռ. . . . . | | |
| Լրիվ փայատերեր (10 ռ.) | | |

## գ) Չքավորների կոոպերացման ճոնղը

| | Քանի հոգի | Ինչ գումարի |
|---|---|---|
| 1 հոկտ. 27 թ. կոոպերացվ. են | | |
| » » » չօգտագործված | | |
| 27-28 թ նորից կոոպերացված | | |
| 1 հոկտ. 28 թ. չօգտագործված | | |
| 1 մարտի 1929 թ. » | | |



## դ) Կոոպերացում յեվ խանութների թիվը

| | 1927 1 հոկտ. | 1928 1 հոկտ. |
|---|---|---|
| Տնտեսությունների կոոպերացման տոկոսը . | | |
| Խանութների թիվը . | | |
| Ձեռնարկների » . | | |

## ե) Գնումը յեվ վաճառքը (գումարներ)

| Ժամկետ | Գնում | Վաճառք |
|---|---|---|
| Մնացորդ առ 1-ն հոկ. 27 թ. | | |
| 1-ին յեռամսյակ . . . . | | |
| 2-րդ » » . . . . | | |
| 3-րդ » » . . . . | | |
| 4-րդ » » . . . . | | |
| Մնացորդ 1 հոկտ. 28 թ. | | |

գ) Վերադիրները, հավելումները, ծախերը յեվ օգուտը

| | Գումարը | %-ի ինքնարժեքի գումարի | %-ային վաճառքի գումարի |
|---|---|---|---|
| Վերադիր ծախքեր | | | |
| Հավելումներ . . | | | |
| Առևտր. ծախքեր | | | |
| Օգուտը . . . . | | | |

դ) Հաշվեկշռի դրությունը առ 1-ն հոկտեմբերի 1927 յեվ 1928 թվի

ԱԿՏԻՎԸ

| ՀՈԴՎԱԾՆԵՐԸ | 1-ն հոկտ. 27 թ. | | 1-ն հոկտ. 28 թ. | |
|---|---|---|---|---|
| | Գումար | տոկ. | Գումար | տոկ. |
| 1 Շրջանառու միջոցներ | | | | |
| Դրամարկղ . . . . . . | | | | |
| Ապրանքներ . . . . . . | | | | |
| Դեբիտորներ . . . . . . | | | | |
| Ձեռնարկներ . . . . . . | | | | |
| Այլ շրջ. միջոցներ . . . . | | | | |
| 2. Արտաշրջանառու միջոցներ | | | | |
| Գույք . . . . . . . . | | | | |
| Փայեր հիմնարկներում . . | | | | |
| Հաշվեկշիռ . . . . . . . | | | | |



ՊԱՍՍԻՎ

| ՀՈԴՎԱԾՆԵՐԸ | 1-ն հոկտ. 27 թ. | | 1-ն հոկտ. 28 թ. | |
|---|---|---|---|---|
| | Գումար | տոկ. | Գումար | տոկ. |
| 1. Սեփական միջոցներ | | | | |
| Փայադրամագլուխ . . | | | | |
| Այլ դրամագլուխներ | | | | |
| Ֆոնդեր . . . . . | | | | |
| 2. Փոխառու միջոցներ | | | | |
| Մուրհակներ . . . . | | | | |
| Ավանդներ . . . . . | | | | |
| Այլ փոխառու-միջոցներ | | | | |
| 3 Օգուտներ . . . . | | | | |
| Հաշվեկշիռ . . . . | | | | |

ե) Օգուտի բաշխման նախագիծը

______ ռ. ______ կ. յենթադրվում է բաշխել

| Ինչ նպատակի | Տոկոսը | Գումարը | |
|---|---|---|---|
| Հիմնական դրամագլուխ . . . | | | |
| Յերկարատև վարկի ֆոնդ . . | | | |
| Պահեստի դրամագլուխ . . . | | | |
| Չքավորների կոոպ. ֆոնդ . . | | | |
| Կուլտ-կրթական և կենց. ֆոնդ . | | | |
| Բանվ. և ծառայող. կենց. ֆոնդ . | | | |
| Այլ ֆոնդեր (շինարար) . . . | | | |

# ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄ

(Խորհուրդներ զեկուցողներին)

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### ա) Սպառկոոպի վարչության համար

1. Զեկուցողը նախ քան թվական տվյալների անցնելը պետք է զեկուցի, թե հաշվական ժամանակաշրջանում սպառկոոպն ինչ պայմաններում է աշխատել՝ ա) վարչությունը քանի՞ նիստ է ունեցել և ինչ հարցեր է քննության առել, բ) վարչության կազմը և փոփոխությունները, գ) ապարատում քանի հոգի յեն աշխատել, դ) ինչպիսի կապ է պահել վարչությունը տեղական կազմակերպությունների հետ և ինչ աջակցություն է ստացել, յե) վերստուգիչ հանձնաժողովը և խանութային հանձնաժողովներն ինչ աշխատանքներ են տարել և մասնակցե՞լ են, արդյոք, վարչության նիստերին, զ) կապը Հայկոոպի հետ. է) կապը Համկոոպբանկի հետ, ը) վարկային լիմիտները Հայկոոպում և Համկոոպբանկում, թ) քանի՞ անգամ են տեղերում (գյուղերում և բաժանմունքներում) տեղի ունեցել անդամների ժողովներ և ինչ հարցեր են քննության առնվել, ժ) ինչ դժվարություններ է ունեցել վարչությունն աշխատանքի ընթացքում (փայակուտակում, ապրանքների բաշխման խնդիրը և



այլն), ժա) չքավորների կոոպերացման գործն ինչ հիմքերի վրա յե դրվել և ի՞նչպես է տարվել, ժբ) կանանց ու յերիտասարդության մեջ տարած աշխատանքները և ժգ) սպառկոոպի անդամների սոցիալական կազմի ուսումնասիրության արդյունքները։

---

## 2. Կուլտ-կրթական յեվ կուլտ-կենցաղային աշխատանքները

2. Հատուկ մանրամասնությամբ պետք է զեկուցել կուլտ-կրթական և կուլտ-կենցաղային գործունեության մասին հետևյալ մոտավոր ծրագրով. ա) յե՞րբ է կազմակերպվել կուլտ-կոմիսիա, բ) քանի՞ կոոպ-խմբակ է կազմակերպվել, գ) ինչ աշխատանք են տարել կուլտ կոմիսիան և կոոպ. խմբակները, դ) ձեր մասնակցությունը կուլտ-արշավին, (քանի՞ լիկկայան եք բացել քանի սովորողներով), կինո ընկերության (քանի՞ նկար և քանի՞ գյուղերում) մեջ ձեր մասնակցությունը, մանկական հրապարակ կամ մանկական պարտեզ ունե՞ք (քանի՞ մանուկներ), խրճիթ-ընթերցարանի մեջ ձեր աշխատանքները, պատի թերթ, գրքի վաճառք։ Հեղափոխական և կոոպերատիվ տոներին կուլտ-կոմիսիայի մասնակցությունն ինչով է արտահայտվել։ Հայկոոպի կուլտ-յենթաբաժնի հետ ձեր կապը։ Կուլտ ֆոնդի մասին։ — Հաշվական ժամանակաշրջանում ի՞նչ գումար եք ունեցել կուլտ-ֆոնդում և ի՞նչ աղբյուրներից։ Ինչի՞ վրա յեք ծախսել այդ գումարը։ Ի՞նչքան չօգտագործված գումար

ունենք կուլտ ֆոնդում։ 1928—29-ին ինչ ծրագիր ենք մշակել կուլտ աշխատանքների վերաբերմամբ (զեկուցել ծրագիրը և նախահաշիվը)։

ԾԱՆՈԹ.—Յեթե որակարգում կուլտ-կոմիսիայի առանձին զեկուցումն ե դրված, վարչության հաշվետու զեկուցման մեջ կարևոր չի մանրամասն կանգ առնել կուլտ աշխատանքների վրա։

## 3. Տնտեսական գործունեյությունը

3. Զեկուցման մեջ պետք ե կանգ առնել նաև այն նվաճումների և ժամանակավոր դժվարությունների վրա, վոր սպառողական կոոպերացիան ընդհանուր առմամբ ունի Համամիութենական մասշտաբով։ Այս մասին, յեթե հաշվետու-վերընտրական ժողովում դըրված ե Հայկոոպի ներկայացուցչի առանձին զեկուցումը, սպառողական կոոպերատիվի վարչության զեկուցողը կարող ե առանձին կանգ չառնել։ Իսկ այն դեպքում, յերբ որակարգում Հայկոոպի առանձին զեկուցումը չի դրված, կոոպերատիվի զեկուցողը պետք ե ծանոթանա այս ժողովածվի համապատասխան գլուխներին և իր զեկուցման մեջ մանրամասն կերպով կանգ առնի նրանց վրա։

ԾԱՆՈԹ.—Տես թեզիսները և թվական տվյալները։

4. Վերջապես, հաշվետու զեկուցման համար մեծ ուշադրությամբ պետք ե նախապատրաստել և մշակել տվյալ կոոպերատիվի թվական տվյալները։ Այս մասին մենք ժողովածվի համապատասխան մասում տալիս ենք զեկուցման համար անհրաժեշտ թվերի աղյուսակներ։ Կոոպերատիվի վարչության անունից զե-



կուցող ընկերը պետք ե հաշվապահի կամ հաշվետարի օժանդակությամբ այդ աղյուսակները լրացնի և նրանց համապատասխան բացատրության ու վերլուծման համար լուրջ կերպով պատրաստվի։

5. Զեկուցման վերջին մասում պետք ե հատուկ մանրամասնությամբ կանգ առնել օգուտների բաշխման խնդրի վրա (տես նախագիծը)։ Անպայման լայն մասսաների մեջ հարց կարող ե առաջանալ, թե ինչու այժմ անհատական պարգևագրումը (պրեմիա տալը) վերացված ե սպառողական կոոպերացիայում։ Անհրաժեշտ ե պարզաբանել, վոր սպառողական կոոպերացիան ներկայումս անցել ե մասսայական սպասարկման (տանում ե կուլտ-կրթական աշխատանք, բաց ե անում մանկ—հրապարակներ, կինո և ռադիոընկերություններ, և այլն), իսկ այդ աշխատանքը պահանջում ե դրամական մեծ հատկացումներ։ Բացի այդ անպայման պետք ե յերկարատև վարկավորման պահեստի, հիմնական դրամագլուխներից հատկացնել այն պարտադիր տոկոսները, վորոնց վերաբերմամբ գոյություն ունեն պետական օրենքները։ Զքավորների կոոպերացման 15 տոկոսային հատկացումը գյուղկոոպների համար բղխում ե մեր գյուղում տանելիք քաղաքականությունից։

6. Դիֆերենցիալ փայի անցնելու հարցը, վորպես շատ կարևոր խնդիր, որակարգում դրված ե առանձին (տես թեզիսները)։

7. Զեկուցողները վերջում պետք ե կատարեն ամփոփումներ հաշվետու շրջանի գործունեյության ընդհանուր արդյունքների մասին և այն հեռանկար-

ունենք կուլտ ֆոնդում։ 1928—29-ին ինչ ծրագիր եք մշակել կուլտ աշխատանքների վերաբերմամբ (զեկուցել ծրագիրը և նախահաշիվը)։

ԾԱՆՈԹ.—Յեթե որակարգում կուլտ-կոմիսիայի առանձին զեկուցումն է դրված, վարչության հաշվետու զեկուցման մեջ կարևոր չի մանրամասն կանգ առնել կուլտ աշխատանքների վրա։

## 3. Տնտեսական գործունեյությունը

3. Զեկուցման մեջ պետք է կանգ առնել նաև այն նվաճումների և ժամանակավոր դժվարությունների վրա, վոր սպառողական կոոպերացիան ընդհանուր առմամբ ունի համամիութենական մասշտաբով։ Այս մասին, յեթե հաշվետու-վերընտրական ժողովում դըրված է Հայկոոպի ներկայացուցչի առանձին զեկուցումը, սպառողական կոոպերատիվի վարչության զեկուցողը կարող է առանձին կանգ չառնել։ Իսկ այն դեպքում, յերբ որակարգում Հայկոոպի առանձին զեկուցումը չի դրված, կոոպերատիվի զեկուցողը պետք է ծանոթանա այս ժողովածվի համապատասխան գըլուխներին և իր զեկուցման մեջ մանրամասն կերպով կանգ առնի նրանց վրա։

ԾԱՆՈԹ.—Տես թեզիսները և թվական տվյալները։

4. Վերջապես, հաշվետու զեկուցման համար մեծ ուշադրությամբ պետք է նախապատրաստել և մշակել տվյալ կոոպերատիվի թվական տվյալները։ Այս մասին մենք ժողովածվի համապատասխան մասում տալիս ենք զեկուցման համար անհրաժեշտ թվերի աղյուսակներ։ Կոոպերատիվի վարչության անունից զե-



կուցող ընկերը պետք է հաշվապահի կամ հաշվետարի օժանդակությամբ այդ աղյուսակները լրացնի և նրանց համապատասխան բացատրության ու վերլուծման համար լուրջ կերպով պատրաստվի։

5. Զեկուցման վերջին մասում պետք է հատուկ մանրամասնությամբ կանգ առնել օգուտների բաշխման խնդրի վրա (տես նախագիծը)։ Անպայման լայն մասսաների մեջ հարց կարող է առաջանալ, թե ինչո՞ւ այժմ անհատական պարգևագրումը (պրեմիա տալը) վերացված է սպառողական կոոպերացիայում։ Անհրաժեշտ է պարզաբանել, վոր սպառողական կոոպերացիան ներկայումս անցել է մասսայական սպասարկման (տանում է կուլտ-կրթական աշխատանք, բաց է անում մանկ—հրապարակներ, կինո և ռադիոընկերություններ, և այլն), իսկ այդ աշխատանքը պահանջում է դրամական մեծ հատկացումներ։ Բացի այդ անպայման պետք է յերկարատև վարկավորման պահեստի, հիմնական դրամագլուխներից հատկացնել այն պարտադիր տոկոսները, վորոնց վերաբերմամբ գոյություն ունեն պետական օրենքները։ Զքավորների կոոպերացման 15 տոկոսային հատկացումը գյուղերի կոոպների համար բղխում է մեր գյուղում տանելիք քաղաքականությունից։

6. Դիֆերենցիալ փայի անցնելու հարցը, վորպես շատ կարևոր խնդիր, որակարգում դրված է առանձին (տես թեզիսները)։

7. Զեկուցողները վերջում պետք է կատարեն ամփոփումներ հաշվետու շրջանի գործունեյության ընդհանուր արդյունքների մասին և այն հեռանկար-

ների մասին, որ կոոպերատիվը ունի համաձայն իր 1928—29 տարվա նախահաշվի և պլանի։ (Այս խնդրի մանրամասնությունները քննվում ե առանձին զեկուցում լսելուց հետո)։

8. Վորովհետև այս տարվա հաշվետու-վերընտրական ժողովները ընկնում են 1928—29 տնտեսական տարվա 4—5 ամիսներն անցնելուց հետո, զեկուցողները մի քանի խոսքով պետք ե հաշվետու զեկուցմանը կցեն ինֆորմացիա կոոպերատիվի 1928—29 տնտ. տարվա առաջին ամիսների (մինչև մարտի 1-ը կամ ապրիլի 1 ը) աշխատանքների մասին։

---

## բ) Սպառկոոպի վերստուգիչ հանձնաժողովի համար

1. Վերստուգիչ հանձնաժողովի կազմը և հաշվետու շրջանում նրա մեջ յեղած փոփոխությունները։

2. Ինչ քննական աշխատանքներ ե կատարել. ա) դրամարկղ, բ) խանութներ, գ) գրասենյակ, դ) հաշվապահություն.

3. Քանի նիստ ե ունեցել և ինչ հարցեր ե քննել։

4. Վարչության հաշվետվության և մի տարվա գործունեության մասին յեզրակացություն և գնահատական։

5. Վարչության նախահաշվի և պլանի մասին յեզրակացություն (վարչության զեկուցումը լսելուց հետո)։

6. Դիֆերենցիալ փայավճարի սիստեմին անցնե-



լու մասին յեզրակացություն, (վարչության զեկուցումը լսելուց հետո)։

7. Ոգուտների բաշխման խնդրի մասին յեզրակացություն (վարչության զեկուցումը լսելուց հետո)։

8. Բացի այդ՝ վերստուգիչ հանձնաժողովը պետք ե կանգ առնի վարչության տարած աշխատանքների, դժվարությունների, բացերի մանրամասն նկարագրության վրա։

9. Վերստուգիչ հանձնաժողովը պետք ե առանձին քննության յենթարկի. ա) խանութային հանձնաժողովների գործունեությունը և իր կապը նրանց հետ, բ) կուլտ-հանձնաժողովների գործունեությունը և գ) տա մանրամասն գնահատական վարչության հասարակական աշխատանքների մասին (չքավորների կոոպերացում, կուլտ-կրթական, կուլտ-կենցաղային և և այլ հասարակական աշխատանքներին)։

10. Զեկուցման վերջում վերստուգիչ հանձնաժողովը անում ե ընդհանուր ամփոփումներ և տալիս ե վարչության հաշվետու շրջանի գործունեության գնահատական։

---

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

Դիտողությունների համար

ՀՀ Ազգային գրադարան
NL0204326